ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2021 թվականի N 333-Ա

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 17 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սուսաննա Կիրակոսյանի*** ժամանակավոր անաշխատունակության պատճառով՝ կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Սուսաննա Եղիազարյանի***, իսկ կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ ***Գայանե Հայրապետյանի*** վրա, *մինչև տնօրենի աշխատանքի ներկայանալը*:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 17
ք. Հրազդան